Երեք ուղի՝ գիտությունը և կրթությունը զարգացնելու մասին

ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը հանդիպել է ՀՀ ԳԱԱ նախագահության անդամների հետ

Նախագահ Սերժ Սարգսյանը երեկ ընդունել է ՀՀ ԳԱԱ նախագահության անդամներին և Ակադեմիայի գիտահետազոտական ինստիտուտների ղեկավարներին: Նախագահն ասել է, որ անհրաժեշտ է համարում Ակադեմիայի վերջերս անցկացված տարեկան ընդհանուր ժողովից հետո գիտնականների հետ քննարկել գիտության զարգացմանը խոչընդոտող խնդիրները և դրանց հնարավոր լուծումները: ՀՀ նախագահը խոսել է մեր երկրում գիտությունը և կրթությունը զարգացնելու երեք առանցքային ուղիների մասին. «Առաջին ճանապարհը, որով մենք պետք է շարժվենք՝ առկա ուսումնական և գիտական հաստատությունների վերակազմավորումն ու ավելի արդյունավետ օգտագործումն է, այսինքն՝ բարեփոխումների շարունակականության ապահովումը: Երկրորդ ճանապարհը նոր տիպի ուսումնական և գիտական հաստատությունների ստեղծումն է, ինչպիսին, օրինակ, հիմնադրեցինք Տավուշում՝ ժամանակակից ինտերնատ-դպրոց, որտեղ ուսուցումը լինելու է օտար լեզվով և կիրառվելու են ուսման ընագավառում ամենաժամանակակից ձեռքբերումները: Երրորդ ճանապարհը մեր ուսանողներին և երիտասարդ գիտնականներին աշխարհի լավագույն ուսումնական ու գիտական հաստատություններում կրթվելու փորձ ձեռք բերելու հնարավորություն ընձեռելն է»:

Ակադեմիկոսները երկրի ղեկավարի հետ զրուցել են գիտության զարգացումը խոչընդոտող մի շարք խնդիրների մասին: Դրանցից առաջնահերթ է համարվել այն, որ Ակադեմիան, համապատասխան փորձա-կոնստրուկտորական ենթակառուցվածքների բացակայության պատճառով, չի կարողանում իր գիտական արդյունքները լիարժեք ներդնել տնտեսությունում: Խոսվել է նաև ԳԱԱ ճյուղային ինստիտուտների և տնտեսության համապատասխան ճյուղերի միջև համագործակցության գործուն մեխանիզմներ ստեղծելու ուղիների մասին: Զրուցակիցներն անդրադարձել են հասարակագիտական գիտությունների, մասնավորապես՝ հայագիտության զարգացումը խթանող պայմանների ստեղծման անհրաժեշտությանը: Խոսվել է նաև հայ գիտնականների աշխատությունները օտար լեզուներով լույս ընծայելու, դրանք նաև էլեկտրոնային ռեսուրսներում ներկայացնելու գործընթացի կազմակերպման մասին: Ակադեմիկոսներն անդրադարձել են նաև այս օրերին ակտիվորեն քննարկվող Հայաստան-Թուրքիա հարաբերությունների կարգավորմանը և հայտարարել, թե ստստում են ՀՀ նախագահին այս գործընթացում: